Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի դպրոցական փուլի – 2024-2025

9-րդ դասարան

Տևողությունը 90 րոպե

1. Ո՞ր շարքում է բաց թողնված միևնույն տառը:
1. առօր-ական, գոմ-շ, մանր-,
2. առ-նչվել, կոր-նթարդ, խոյ-նթաց,
3. ման-րյա, հողմակ-ծ, հատ-րյակ,
4. միմ-անց, Եղ-ա, խարտ-աշ, հր-ա

2. Ո՞ր շարքում է բաց թողնված միևնույն տառը:
1. խոր-ին, հայթ-այթել, ընդ-ուպ
2. ճրա-ակալ, պատարա-, գո-նոց
3. գո-ի, չղ-իկ, հաղար-
4. ժայռակո-, դա-նեվարդ, ոսկեծո-

3. Ո՞ր շարքի բոլոր բառերում *ի* ձայնավորի հնչյունափոխություն կա:
1. հոգևոր, գծագիր, հոգատար
2. թշնամական, դեղնուց, դեռափթիթ
3. հաշվապահ, տեսչություն, լուսնկա
4. կարմրավուն, մարդկային, վերնատուն

4. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոմանիշներ:
1. ակնդետ, սևեռուն, ուշադիր
2. դրացի, հարևան, կողակից
3. կեղեքել, ծաղրել, հեգնել
4. երկնչել, պառակտել, բաժանել

5.Ո՞ր շարքում ածանցավոր բառ չկա:
1. տաղտուկ, կապույտ, գուշակ
2. ապարանջան, ամրոց, փրկագին
3. ավազակ, օրինակ, բարեբեր
4. գահընկեց, վարագույր, դպրոց

6.Ո՞ր դարձվածքի դիմաց գրվածը նրա իմաստի ճիշտ բացատրությունը չէ:
1.տեղիք տալ- առիթ տալ
2.կրակ դառնալ- կատաղել, չարանալ
3. ազատ շունչ քաշել- մաքուր օդ շնչել
4. երկու կրակի արանքում- դժվարին իրավիճակում

7. Ո՞ր շարքում անձնանիշ գոյական կա:
1. մոմլաթ, անձրևորդ,
2. բրուտ, դերձան,
3. արտույտ, դրասանգ,
4. ալեզարդ, բավիղ

8. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:
1. որմնասյուն, ամառ, որսաշուն
2. մանուկ, գարուն, գառ
3. լեռ, ազգանուն, ձմեռ,
4. անկյուն, աշուն, ուրախություն

9.Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:
1. տաղտուկ, անոթի, մենակ,
2. արծվենի, արևելյան, տասնամյակ
3. ազնվայր, տոհմիկ, ոսկեհյուս
4. շնորհալի, ականավոր, լուսեղեն

10. Ո՞ր շարքում են բայի միայն անցյալ ժամանակաձևերը:
1. կխոսենք, գալիս է, չի վերադառնալու
2. չի պատմի, վե՛ր կաց, պետք է սովորեք
3. թռչելու են, կգտնեմ, մի լռի՛ր
4. կարդացել էին, չէր գալու, հարց տվեց

11.Ո՞ր շարքի բոլոր բառերն են մակբայներ:
1. մանկուց, այստեղ, հոտնկայս, միևնույն
2. դեմ դիմաց, երիցս, զույգ-զույգ, գրեթե
3. ցմահ, որքան, ինչևիցե, ընդմիշտ,
4. որևէ, վերջիվերջո, այնքան, բազմիցս

12. Ո՞ր շարքում են միայն այն կապերը, որոնց հետ գործածվում են անձնական դերանունների սեռական հոլովաձևերը:
1. միջև, դեմ, փոխարեն, չափ
2. նման, մոտով, համար, հետ
3. հօգուտ, պես, ընդդեմ, ի հեճուկս
4. ըստ, հանձին, հանուն, առանց

13.Ո՞ր նախադասության ընդգծված շարահյուսական անդամի պաշտոնն է սխալ նշված:

1. ***Չորրորդ*** օրը սկսվեցին բուռն քննարկումները:(որոշիչ)
2. ***Ամռանը***՝ գիշերներին, հաճախ էինք նստում ծովի մանրավազ ափին՝ վայելելու ալիքների մեղմ նվագը: (բացահայտիչ)
3. Թեժ ***արևից*** լեռան ստորոտին փռված խոտը տեղ-տեղ այրվել էր: (ներգործող խնդիր)
4. ***Համաձայն խոստմանս***՝ նույն օրը մեկնեցի գյուղ: (հիմունքի պարագա)

14. Ո՞ր նախադասությունն է բարդ ստորադասական:

1. Այսօր ո՛չ ես քեզ հյուր եկա, ո՛չ էլ դու՝ ինձ:
2. Էսի՛ր մորդ խորհուրդները, թե չէ ոտքդ քարին կառնի:
3. Հրացանի ձայնը լսվեց թե չէ, բոլորս արագ թաքնվեցինք նկուղում:
4. Այդ խոսքերը լսելուն պես նա ամոթից շառագունեց:

15.Ո՞ր պնդումն է ճիշտ:

1. Նախադասության ենթական արտահայտվում է միայն գոյականով:
2. Որոշ շաղկապներ նախադասության անդամ են:
3. Մի շարք բառեր և՛ մակբայ են, և՛ կապ:
4. Պատճառի պարագան արտահայտվում է միայն գործիական հոլովով:

16. Տրված նախադասության մեջ քանի՞ կետադրական սխալ կա:

Ամառ էր և արևի աչք կուրացնող ճառագայթները սփռվել էին հուռթի այգիների վրա, քաղցրացնելով մրգերը, իսկ խաղողի վազը, կքած ողկույզների ծանրությունից՝ ասես տնքում էր, ճգնելով վեր պահել ճյուղերը:

17. Քանի՞ դերբայական դարձված կա տրված հատվածում (նախադասությունները կետադրված չեն):

Վախվորած շունն ի վերջո որոշեց մոտենալ տղային և փոքր-ինչ համարձակություն առնելով կանգնեց հետևի ոտքերի վրա, ապա թաթիկները դնելով տիրոջ կրծքին քնքշանքով նայեց նրա երեսին կենդանական բնազդով գուշակելու ինչու է նա այդքան տխուր: Երիտասարդը զգացված շան հայացքից շոյեց նրա գլուխը և բարակը մխիթարվելով զգվանքից նստեց սենյակի անկյունում հայացքը հառած տիրոջ դեմքին:

18. Բայի 5 եղանակներից քանի՞ տեսակն է գործածվել շարադրանքում:

Արևի ճառագայթների ներքո երևաց կղզին, որը օվկիանոսի երեսին զմրուխտե օազիս էր հիշեցնում: Թվում էր՝ ջրերի վրա օրորվելով նա հավերժ պարելու է իրեն փարվող ալիքների առաջ: Գիշերը կղզին նման էր վեղարավոր ապաշխարողի: Պարզ էր, որ եթե լուսաբացին մութը տարրալուծվեր, խաբկանքը կանէանար, և կղզին, ավա՜ղ, դարձյալ պիտի պարուրվեր մենակության թախիծով:

19. Նախադասություններից քանիսն են բարդ համադասական (նախադասությունները կետադրված չեն):

Այս քարերը լեզու ունենային կպատմեին զարմանալի պատմություններ:
Ժայռեր, քարափներ, խոր ձորեր և այս ամենի կողքին հանկարծ տարածվում է հարթ դաշտավայրը:
Շուտով բոլորովին կմթնի ամեն ինչ կթաղվի ականակիր խավարի մեջ:
Մի՞թե չեք տեսնում ինչ է կատարվում ձեր շուրջը:
Մամռոտ քարի վրա երկու փետուր էր ընկած թփի չոր ճյուղերին արյան կաթիլներ:

20. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության քանի՞ սխալ տարբերակ կա:

Ծառերը կարծես ծերացել էին, և հովի թեթև շնչից անգամ օրորվում էին նրանց վերասլաց կատարները:

կարծես- պարզ ստորոգյալ,
ծերացել էին- բաղադրյալ ստորոգյալ
նրանց- հատկացուցիչ,
վերասլաց- որոշիչ,
կատարները-ուղիղ խնդիր
շնչից- պատճառի պարագա